



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 12 ՅՈՒՆԻՍ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ,

յաղագս ամենայնի Տէր, փառք Քեզ:

ԱՊՈԹՔ

Ով Տէ՛ր մեր Աստուած, ուրախութեամբ ու երախտագիտութեամբ Քու ներկայութեանդ կազնած, փառք կու տանք Քեզի, որովհետեւ Դուն ես մեր փրկութեան Վէմբ: Ընդունէ՛ մեր օրհնութիւնն ու երկրպագութիւնը, որովհետեւ Դուն մեզ ստեղծեցիր, եւ մենք Քուկդ ենք՝ Քու արօ-տիդ ժողովուրդը, Քու ձեռնովդ ստեղծուած: Այսօր, Տէ՛ր, օգնէ՛ մեզ լսե-լու Քու ձայնդ: Փափկացուր մեր սրտերը, որպէսզի չկարծրանան ըմբոս-տութեամբ կամ կասկածով, այլ Քու ներկայութեանդ առջեւ փախեմք հա-ւատով, հնազանդութեամբ եւ խոնարհութեամբ: Առաջնորդէ՛ մեր ֆայ-լերը հաւատարմութեամբ, եւ պահէ՛ մեզ հաստատ Քու նշմարտութեանդ մէջ: Թող մեր կեանքը արտացոլէ ակնածանք, երախտագիտութիւն եւ ուրախ օրհներգութիւն, այժմ եւ յաւիտեան. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցաւ փառն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեա-ցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուած-ձաճնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պաշտպան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՍԱՂՄՈՍ 95

ԵԿԷՔ ՑՆԾՈՒԹԵԱՄԲ ԵՐԳԵՆՔ ՏԻՐՈՋ

Եկէք ցնծութեամբ երգենք Տիրոջ,
ուրախութեամբ աղաղակենք անոր՝ որ մեր Վեմն ու Փրկիչն է:
Փութանք Իրեն ներկայանալ գոհաբանութեամբ,
ուրախ աղաղակներով օրհնութիւն երգենք Անոր:
Որովհետեւ Տէրը մեծ Աստուածն է.
Ան է որ կը թագաւորէ բոլոր աստուածներուն վրայ:
Անոր ձեռքին մէջ են երկրի խոր վիհերը,
ինչպէս Իրն են լեռներու կապարները:
Իրն է ծովը, Ինք սպեղծեց զայն, Իր ձեռքերը գոյացուցին ցամաքը:
Եկէք պաշտենք զայն եւ երկրպագենք,
ծունկի գանք մեր Արարիչին՝ Տիրոջ առջեւ:
Որովհետեւ մեր Աստուածն է Անիկա, եւ մենք՝ Իր ժողովուրդը,
Իր հօտին ոչխարներն ենք, որ Իր ձեռքով կ'արածէ:
Մտիկ ըրէք այսօր ինչ ոչ կ'ըսէ Ան.- “Յամառութիւն մի ընէք,
ինչպէս ըրիք Մերիպայի մէջ, փորձութեան օրը, անապատին մէջ:
Հոն ձեր հայրերը զիս փորձեցին,
Իմ գործերս փեսած ըլլալով հանդերձ՝ փորձի ենթարկեցին զիս:
Քառասուն տարի եւ զգուեցայ այդ սերունդէն,
եւ ըսի.- Անհաւատարիմ ժողովուրդ մըն է,
որ իմ օրէնքներս չարգեց բնաւ”:
Եւ բարկութեանս մէջ եւ երդում ըրի՝
որ անոնք բնաւ պիտի չմտնեն այն երկիրը՝
որ անոնց հանգիստ մը պատրաստած եմ”:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺՈՐ



ՍԱՂՄՈՍ 95

ԵԿԷՔ ՑՆԾՈՒԹԵԱՄԲ ԵՐԳԵՆՔ ՏԻՐՈՋ

Թագաւորական Սաղմոսներու շարքին մաս կազմող 95-րդ Սաղմոսը ունի երկու րա-ժին: 1-7-ին Եւ 8-11-ին: Սկսինք առաջին համարէն: Եկէք ղնծութեամբ երգենք Տիրոջ: Ի՞նչ երգ է որ ցնծութեամբ պէտք է երգել: Գիտէք երգերու տարբեր ժանրեր եւ տեսակներ կան, տարբեր առիթի, տարբեր նիւթերով: Միրոյ, տխուր առիթի, հարսանիքի, ուրախ տրամադրութեան: Իսկ այսպէղ արդեօք ի՞նչ ի մտի ունի որպէս երգ: Յաջորդող տողերը կու գան աւելի յստակ ներկայացնելու բնոյթը այդ երգերուն: Ուրախութեան, գոհաբանութեան եւ օրհ-ներգութեան երգեր բարձրաղաղակ: Այս երգերը ուղղուած մեր Վեմին, Փրկչին, Տիրոջ: Ինչո՞ւ պէտք է երգել, որովհետեւ Տէրը Ինք մեծիս Աստուածն է, Ան է որ կը թագաւորէ բոլոր աստուածներու վրայ: Ան է որ սպեղծեց եւ ամէն ինչ գոյացուց: Ուրեմն իբրեւ այդպիսին, եկէք Անոր առջեւ ծունկի

գալու, որ խոնարհութեան նշան է, պաշտենք եւ երկրպագենք: Պաշ-տել եւ երկիրպագել կը նշանակէ Անոր ծառայել: Անոր հնազանդիլ: Իսկ 7-րդ համարը կու գայ միտքը պարզելու, թէ մեր հնազանդութիւնը, մեր ծառայութիւնը Անոր, ոչ աշխարհիկ հասկացողութեամբ՝ Տէրի եւ ծառայի, այլ Հովիւի եւ ոչխարի, Անոր պարկանելիութեան: Անոր հոգածութիւնը վայելող, որ Ինք կ'առաջնորդէ զիրենք: Ինչպէս կը կարդանք 23-րդ Սաղմոսին մէջ, Տէրն է իմ Հովիւս, բանի մը կարօտ պիտի չըլլամ ես: Յաջորդ հապուածը յիշեցում է, ազդարարութեան ոճով: Կը սկսի "Մտիկ ըրէ" արտայայտութեամբ: Այս արտա-յայտութիւնը ամէն Կիրակի կը լսենք երբ Ս.

Պարարագի խորհուրդին ներկայ կ'ըլլանք. "Պոսիտումէ" մտիկ ըրէք: Այսինքն՝ ականջները լաւ բացէք: Ուշադրութեամբ լսեցէք: Հեղա-քրքրական միւս բառը "Այսօր": Այս արտայայտութիւնը կը նշանակէ, Տիրոջ խօսքը միայն անցեալին ըսուած խօսք մը չէր ու չէ, այլ այժմեականութիւն ունի: Այնպէս ինչպէս Քրիստոսի ծնունդն ու յարութիւնը, այժմեականութիւն ունին: Այսօր ծնաւ, այսօր յարեաւ: Միայն անցեալին պարկանող դէպք մը կամ եղելութեան մը մասին չէ: Նոյնպէս ալ Տիրոջ խօսքը, որ թէկուզ անցեալին ըսուած, սակայն, այսօր ալ իր ըսելիքը ունի իւրաքանչիւրիս: Հեղաքրքրականօրէն այս հապուածը իր ամբողջութեամբ մէջբերուած է Եբրայեցոց նամա-կին 3-րդ գլխուն մէջ: Նիւթը կը վերաբերի անապարային թափառումներուն, ուր Եգիպտոսէն ելլելէ յետոյ անապարային թափառումներու ընթացքին իսրայէլացի ժողովուրդին յա-մառութիւնը եւ գԱստուած փորձելու երեւոյթը: Հակառակ Աստուծոյ ցուցաբերած բարութեան, ու մանաւանդ՝ հրաշքին, անոնք տակաւին չվստահեցան Աստուծոյ, այլ ընդհակառակը նաեւ փորձեցին զԻնք: Եւ ահա անոնց անհաւարարմութեան պարճառով Աստուած ալ երդում ըրաւ, որ անոնք մտնեն խոստացուած երկիր: Այդպէս ալ կը բացատրուի Եբրայեցոց նամաին մէջ, ըսելով.

"Զգուշացէք չըլլայ որ ձեզմէ ոեւէ մէկը սրտով չարանայ եւ անհաւա-րութեամբ մերժէ ճանչնալ գԱստուած, կեանքի աղբիւրը: Ոեւէ մէկը մեղքերէ տարուելով իր սիրտը չփակէ Աստուծոյ դիմաց: Այլապէս այնպէս ինչպէս անոնցմէ ոմանք չկրցան մտնել խոստացուած երկիր, նոյնպէս ալ մենք չկարենանք մտնել յաւիտենական կեանք: